Բենիամին

Բենիամին բնակավայրի վարչական տարածքը կազմում է 860.54հա, բնակչությունը 709 մարդ: Բենիամին բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 110 կմ, մարզկենտրոնից՝ 15 կմ, իսկ Երևան-Գյումրի մայրուղուց՝ 1 կմ: Գյուղը գտնվում է Շիրակի մարզի հարավ-արևմտյան մասում: Գյուղի վարչական տարածքով հոսում է «Կարկաչուն» գետակը: Սահմանակից են՝ Ազատան, Սարատակ, Լուսակերտ, Գուսանագյուղ, Բայանդուր բնակավայրերը: Գտնվում է ծովի մակերևույթից 1300 մ բարձրության վրա: Գյուղի կենտրոնական մասում կա կառուցված եկեղեցի թվագրված 1870 թվական: Բնակլիմայական պայմանները փոփոխական են և երբեմն ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Վարելահողերը ջրովի են և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Գյուղի բնակիչները հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Գյուղում գործում է դպրոցը, ակումբը, գրադարանը: